ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/33

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Մանանկ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Մանանկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Պապյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ուսադիրների և թևքանշանների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-7/57-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1193-2021 գրությամբ «Մանանկ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ.-ի թիվ ՊՆ//317-2021 գրության հիման վրա, 01.02.2021թ.-ին «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/33 համարի ծածկագիրը:

11.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.01.2021թ.-ի թիվ ՊՆ//317-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ-ի միջև 06.10.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/56-1 և 07.10.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին լուծել է՝ N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 գնման պայմանագիրը միակողմանի մասամբ, իսկ N ԳՀԱՊՁԲ-20-7/56-1 գնման պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի լուծման վերաբերյալ գրությունները 25.01.2021թ. հրապարակվել են www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մանանկ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.02.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/630-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «Մանանկ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/33 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ մասնակցի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

Մասնակիցը 07.10.2020թ. ստորագրել է ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 պայմանագիրը, որով ստանձնել է պարտավորություններ մինչև 20.11.2020թ. մատակարարել ապրանքներ: Հարկ է նկատել, որ պայմանագրի կնքման պահին արդեն իսկ առկա էր կորոնավիրուսային համավարակը և ՀՀ-ում հայտարարված էր կարանտին, իսկ պատերազմը շարունակվում էր: Այսինքն՝ մասնակիցը համաձայնագրի ստորագրման պահին արդեն իսկ տեղյակ լինելով առկա խոչընդոտների մասին, ստորագրել է նշված պայմանագիրը և ստանձնել պարտավորություններ մինչև 20.11.2020թ մատակարարել ապրանքներ, որոնք չի մատակարարել:

Այս կապակցությամբ գտնում եմ, որ մասնակցի դիրքորոշմամբ ներկայացված հիմքերը էական ազդեցություն չեն ունեցել մասնակցի կողմից պայմանագրով նախատեսված մատակարարումները չիրականացնելու վրա և այն ընդամենը փորձ է ստանձնած պարտավորությունները չկատարելը արդարացնելու ուղղությամբ:

Հայտնում եմ նաև, որ ստանձնած պարտավորությունների նկատմամբ նմանօրինակ վերաբերմունքը խիստ բացասական հետևանքներ է ունեցել և ունենալու ՀՀ ՊՆ ապահովման գործընթացի վրա:»:

3. <u>«Մանանկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.02.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մանանկ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1193-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 09.02.2021թ.-ին ներկայացրած թիվ Պ-009 գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՅ-ԼՕ-2021/33 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ Պաշտպանության Նախարարության և <<Մանանկ>> ՍՊԸ-ի միջև 07.10.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 պայմանագրով <<Մանանկ>>ՍՊԸ-ն պարտավորվել է առավելագույնը մինչև 20.11.2020թ. արտադրելու և գնման ժամանակացույցի համաձայն ՀՀ ՊՆ-ին մատակարարելու 11 տեսակի ուսադիրներ, 4 տեսակի թևքանշաններ և 1 տեսակի տարբերանշան: Պայմանագրի ժամանակացույցի համաձայն 7 տեսակի ուսադիրները, 4 տեսակի թևքանշանները և 1 տեսակի տարբերանշանը արտադրվել և մատակարարվել է ՊՆ ՆՏԱԴ-ին, իսկ 4 տեսակի ուսադիրներ՝ 1000 զույգ (Ուսադիր ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի), 700 զույգ (Ուսադիր կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով հանովի), 520 զույգ (Ուսադիր կուրսանտական կազմի կարովի կապույտ դաշտով) և 520 զույգ (Ուսադիր կուրսանտական կազմի հանովի կապույտ դաշտով) չենք կարողացել մատակարարել, ուստի ՊՆ ՆՏԱԴ-ը միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագրի նշված 4 տեսակի ուսադիրների վերաբերյալ մասը: Հիշյալ 4 տեսակի ուսադիրները չեն արտադրվել ու մատակարարվել հետևյալ պատճառներով՝

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. <<Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին>> թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմբերի 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն

որոշմամբ 2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2021 թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին:

2020թ. մարտ ամսից մինչև օրս <<Մանանկ>> ՍՊԸ –ն Կառավարության հիշյալ որոշումների հիման վրա աշխատել է տևական ընդհատումներով, բազմաթիվ աշխատողներ վարակվել են կորոնավիրուսով, որի պատճառով ՍՊԸ-ն այդ ամբողջ ընթացքում գործել է 20-25% հզորությամբ: Եղել են դեպքեր, որ որևէ արտադրամասի 1 աշխատողի վարակման պատճառով չի աշխատել ամբողջ արտադրամաս, քանի որ որպես կոնտակտավորներ արտադրամասի բոլոր աշխատողները ինքնամեկուսացվել են: Իսկ ձևարանի աշխատողների ինքնամեկուսացման պատճառով տևական ժամանակով պարալիզացվել է ողջ ֆաբրիկայի գործունեությունը:

Կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք մեր կողմից գնվում և ներկրվում են առավելապես արտասահմանից (Ռուսաստան Բելոռուս, Թուրքիա և այլն:) Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները:

Բացի նշված պայմանագիրը, <<Մանանկ>> ՍՊԸ-ն կնքված այլ պայմանագրեր ունի նաև այլ գերատեսչությունների հետ: Վերը հիշատակված ֆորս-մաժորային պայմանների պատճառով այդ պայմանագրերի լրիվ կամ մասնակի կատարումը ևս խոչնդոտել է վիճահարույց պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը:

Այդ դժվարություններին ավելացել է նաև 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ՀՀ-ի և ԱՀ-ի նկատմամբ:Սեպտեմբերի 27-ից մինչև պատերազմի ավարտը՝ նոյեմբերի 9-ը <<Մանանկ>>ՍՊԸ-ն կասեցրել է բոլոր պայմանագրային պարտավորությունները, այդ ընթացքում միմիայն զբաղվելով հայկական բանակի համար համազգեստի, վրանների, քնապարկերի արտադրությամբ ու առաջնագիծ մատակարարմամբ, որի պատճառով խախտվել են ոչ միայն սույն, այլև այլ գերատեսչությունների հետ կնքված տասնյակ այլ պայմանագրերով նախատեսված մատակարարումների ժամկետները:

1.ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն ..... մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ <<պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները >>:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն <<Ձեռնարկատիրական գործունեություն իրականացրելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով>>:

N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 պայմանագրի 7-րդ կետով սահմանված է՝ <<Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել.....>>:

Ֆորս-մաժորային իրադրության պայմաններում <<Մանանկ>>ՍՊԸ–ն ի վիճակի չէր արտասահմանից ձեռք բերելու և ներկրելու հիշյալ 4 տեսակի ուսադիրների երկնագույն երիզները: Հետաքրքրվելով և պարզելով, որ գործընկեր <<Պահապան>>ՍՊԸ-ն մատակարարման պայմանագիր ունի Բելոռուսի Մոգիլյով քաղաքի <<Լենտա>>ԲԲԸ-ի հետ, որը արտադրում է տարբեր տեսակի ուսադիրների երիզներ խնդրեցինք <<Պահապան>> ՍՊԸ-ի տնօրինությանը <<Լենտա>>ԲԲԸ-ից ներկրել ուսադիրների երիզներ, ապա վաճառել մեզ: <<Պահապան>> ՍՊԸ-ի տնօրինությանը՝ համաձայնությունը ստանալուց հետո, խնդրել ենք ՊՆ ՆՏԱԴ-ի ղեկավարությանը տրամադրելու պահանջվող 4 տեսակի ուսադիրների նմուշներ, ստացվելիք երիզների կապույտ գույնի ստույգ երանգը ունենալու և այդ երանգի երիզներ պատվիրելու համար: ՆՏԱԴ-ի ղեկավարությունը հայտնել է, որ պահանջվող ուսադիրների ստույգ երանգի նմուշներ չունեն, ուստի գունավոր ձևաթղթի վրա ՆՏԱԴ-ի աշխատակիցների հետ համաձայնեցրել ենք երիզի ստույգ երանգը, ապա ձևաթուղթը ներկայացրել ենք <<Պահապան>> ՍՊԸ-ին: Նոյեմբերի 23-ին <<Պահապան>> ՍՊԸ-ն ստացել և մեզ է վաճառել <<Լենտա>> ԲԲԸ-ից ստացված երիզները, որոնցով

արտադրել ենք ուսադիրների առաջին փորձանմուշները և ներկայացրել ՊՆ ՆՏԱԴ-ի հաստատմանը, սակայն վերջինս չի հաստատել փորձանմուշները, պատճառաբանելով, որ երանգը պահանջվածից ավելի բաց երանգի է, չնայած որ երանգը լիովին համապատասխանում էր ձևաթղթի վրա նրանց հավանությանը արժանացած երանգին: Կրկին անգամ՝ ավելի մուգ երանգի երիզներ ձեռք բերելու համար այլևս ժամանակ չկար, քանի որ պայմանագրի ժամկետը արդեն լրացել էր: Բազմիցս բանավոր, իսկ 2 անգամ գրավոր դիմել ենք ՊՆ ՆՏԱԴ-ի ղեկավար Ն.Յոլչյանին, հայտնել ստեղծված իրավիճակի մասին, խնդրելով իրենց դիրքորոշումը՝ կամ 30 աշխատանքային օրով երկարացնելու մատակարարման ժամկետը կամ առաջարկելու այլ լուծում, սակայն ՆՏԱԴ-ի ղեկավարությունը այդ ուղությամբ որևէ դիրքորոշում չի հայտնել, ուստի հարցը մինչև օրս գտնվում է չլուծված վիճակում: Միայն 22.01.2021թ. ՊՆ ՆՏԱԴ-ից ստացել ենք ծանուցում հիշյալ 4 տեսակի ուսադիրների մասով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին: Տարօրինակ է, որ մեր հիշյալ գրություններից շուրջ 50 օր հետո է մասնակի լուծվել պայմանագիրը: Եթե մեր գրություններին ի պատասխան ՆՏԱԴ-ի ղեկավարությունը դրական դիրքորոշում հայտներ, ապա լիարժեք ի վիճակի էինք ձեռք բերելու համապատասխան երանգի երիզները, արտադրելու և մատակարարելու պահանջված երանգի բոլոր ուսադիրները:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով <<Մանանկ>> ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը, խնդրում ենք <<Մանանկ>> ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել:»:

Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով «Մանանկ» ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը, ի լրումն վերոհիշյալ գրության, 18.02.2021թ.-ին թիվ Մ-019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն ՍՅ-ԼՕ-2021/33 ընթացակարգով մեր 09.02.2021թ. դիրքորոշմանը, մանրամասնում ենք, թե կոնկրետ ինչումն է դրսևորվել ֆորս-մաժորային իրավիճակի ազդեցությունը N <<ԳՀԱՊՁԲ-20-7/57-1>> պայմանագրով նախատեսված չորս տեսակի ուսադիրների ժամանակին չմատակարարման վրա:

- *հիշյալ ծածկագրով մրցույթին <<Մանանկ>> ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել 08.09.2020թ.: Հայտերի բացումը տեղի է ունեցել 11.09.2020թ, իսկ 07.10.2020թ. կնքվել է պայմանագիրը:*

Մրցույթի մասնակցության հայտ <<Մանանկ>> ՍՊԸ-ն ներկայացրել է նկատի ունենալով նաև, որ ՀՀ-ում արտակարգ դրության ավարտից՝ սեպտեմբերի 11-ից հետո արտասահմանի հետ բացվելու են ավտոճանապարհային և օդային հաղորդակցությունները, ուստի ի վիճակի կլինեինք ներկրելու ուսադիրների կարման համար անհրաժեշտ գործվածքները և աքսեսուարները: Սակայն արտակարգ դրության ավարտի հենց նույն օրը՝ սեպտեմբերի 11-ին, ՀՀ Կառավարության հիշատակված որոշման հիման վրա ՀՀ-ում սահմանվել է կարանտին և ըստ էության փակ է մնացել ցամաքային և օդային բոլոր հաղորդակցությունները: Բացի այդ, այդ օրերին Վրաստանում ևս լայն թափով սկսեց տարածվել կորոնավիրուսը, ուստի Վրաստանը փակել էր ՀՀ-ի հետ բոլոր ցամաքային հաղորդակցությունները:

- *Պայմանագիրը կնքելուց 1-2 օր անց <<SKYPE>> համակարգով կապնվելով Բելոռուսի Մոգիլյով քաղաքի <<Լենտա>> ՓԲԸ-Ի հետ պատվիրել ենք ուսադիրների գործվածքը, ուղարկելով ՊՆ ՆՏԱԴ-ի հավանությանը արժանացած ուսադիրի գործվածքի երանգի նմուշը, /մնացածը ըստ նախորդ դիրքորոշման/:*

- *Եթե չլիներ համավարակի և ձգձգվող պատերազմի պատճառով օդային և ցամաքային ճանապարհների լրիվ փակ լինելը, ապա թեկուզ լրացուցիչ ծախսերի գնով մեր ապրանքագետ-մասնագետին կգործուղեինք Մոգիլյով ՝ այլ երանգի գործվածք բերելու համար, սակայն դա բացարձակ անհնար էր նաև այն պատճառով,որ պատերազմի ողջ ընթացքում տղամարդկանց ելքը ՀՀ-ից կատեգորիկ արգելված էր:*

- *Ինչպես հայտնել ենք նախորդ դիրքորոշման մեջ, պայմանագրի ժամանակացույցի ընթացքում <<Մանանկ>> ՍՊԸ-ի մի քանի աշխատակիցներ վարակվել են կորոնավիրուսով, որը նույնպես ազդել է Ընկերության բնականոն գործունեության վրա:*

Կից ուղարկվում է Ընկերության աշխատակիցներ Արթուր Գեղամյանի, Դոնարա Մարտիրոսյանի, Գայանե Կարապետյանի՝ կորոնավիրուսով վարակված լինելու վերաբերյալ բժշկական տեղեկանքների պատճենները: Եղել նաև դեպքեր, որ վարակված աշխատակիցները բուժումը ստացել են տնային պայմաններում ինքնամեկուսացվելով և չեն դիմել բուժհաստատություններ:

Կից ներկայացնում ենք ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ի կողմից բանավոր հաստատված երանգի և 23.11.2021թ գնված ուսադիրի գործվածքի նմուշի լուսանկարները, որը վկայում է, որ <<Լենտա>> ՓԲԸ-Ից ուղարկվել է ճիշտ պահանջված երանգի գործվածք:»:

4. <u>ՍՑ-LO-2021/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 07.10.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/57-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ 20.11.2020թ.-ը) պետք է մատակարարի 1000 զ-գ «ուսադիր ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 700 զ-գ «ուսադիր կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի կարովի կապույտ դաշտով», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի հանովի կապույտ դաշտով» ապրանքատեսակները:

iii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.01.2021թ.-ի թիվ ՆՏԱ/188 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 07.10.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/57-1» գնման պայմանագրի համաձայն՝ Մասնակիցը մինչև 2020թ.-ի նոյեմբերի 20-ը պետք է մատակարարեր՝ 1000 զ-գ «ուսադիր ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 700 զ-գ «ուսադիր կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի կարովի կապույտ դաշտով», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի հանովի կապույտ դաշտով» ապրանքատեսակները, որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ.-ի հունվարի 22-ին միակողմանի

ամբողջությամբ լուծել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/57-1» գնման պայմանագիրը (խախտվել է մատակարարման ժամկետները):

iv. Մասնակիցը 25.11.2020թ.-ին թիվ Մ-010 Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 07.10.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/57-1 պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո «Մանանկ» ՍՊԸ-ն ձեռնամուխ է եղել պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Պայմանագրով նախատեսված բոլոր տիպի ուսադիրների պատրաստման համար անհրաժեշտ ժապավենները և աքսեսուարները պատվիրվել է Բելոռուսի Հանրապետության Մոգիլյով քաղաքի «Լենտա» գործարանին: 19.11.2020թ. ստացվել է պատվիրված ամբողջ խմբաքանակը, ուստի անմիջապես սկսվել է ուսադիրների արտադրությունը, որոնց առաջին փորձանմուշները ուղարկվել է Պատվիրատուի հաստատմանը: Տարաձայնություն է առաջացել միայն պայմանագրի 9-րդ (ուսադիր կուրսանտական կազմի կարովի, կապույտ դաշտով) և 10-րդ (ուսադիր կուրսանտական կազմի հանովի, կապույտ դաշտով) չափաբաժինների մասով: Բանն այն է, որ ուսադիրների կապույտ գույնի երանգը Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո է միայն պատվիրվել նշված «Լենտա» գործարանին, որը գործել և Մասնակցին է ուղարկել ճիշտ վերջինիս պատվիրած երանգի ժապավեններ: Պատրաստի ուսադիրի փորձանմուշը Մասնակցի կողմից ներկայացվել է հաստատման, որը Պատվիրատուի ցուցումով փորձանմուշը ներկայացվել է ՊՆ Ավիացիոն համալսարանի ղեկավարությանը, սակայն, վերջինս նույնպես հավանություն չի տվել ուսադիրի կապույտ գույնի երանգին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1193-2021 գրությամբ «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա»

ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 07.10.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/57-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ 20.11.2020թ.-ը) պետք է մատակարարի 1000 զ-գ «ուսադիր ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 700 զ-գ «ուսադիր կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի կարովի կապույտ դաշտով», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի հանովի կապույտ դաշտով» ապրանքատեսակները:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.01.2021թ.-ի թիվ ՆՏԱ/188 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 07.10.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/57-1» գնման պայմանագրի համաձայն՝ Մասնակիցը մինչև 2020թ.-ի նոյեմբերի 20-ը պետք է մատակարարեր՝ 1000 զ-գ «ուսադիր ավագ սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 700 զ-գ «ուսադիր կրտսեր սպայական կազմի երկնագույն երիզով հանովի», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի կարովի կապույտ դաշտով», 520 զ-գ «ուսադիր կուրսանտական կազմի հանովի կապույտ դաշտով» ապրանքատեսակները, որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ.-ի հունվարի 22-ին միակողմանի

ամբողջությամբ լուծել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/57-1» գնման պայմանագիրը (խախտվել է մատակարարման ժամկետները):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մանանկ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 22.01.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 25.01.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/188 ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մանանկ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները չեն մատակարարվել վերջինիս կողմից դրսևորած անգործության արդյունքում, իսկ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին ու հանգամանքներին, մասնավորապես՝ 09.02.2021թ.-ին և 18.02.2021թ.-ին Բողոքներ քննող անձին ուղղված գրությանն ու դրա կից նյութերին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝

տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի

հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքը, ապա ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 17:00-ից մինչև 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը, օբյեկտիվորեն չէր կարող ազդել Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման վրա, քանի որ Պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունում կարանտին սահմանելու և ռազմական դրություն հայտարարելուց հետո՝ այդ ժամանակահատվածում, որպիսի պայմաններում անհաղթահարելի ուժի ազդեցության հիմքով Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու համար Մասնակիցը չի կարող ազատվել պատասխանատվությունից, ինչպես վերը նշվեց, **անհաղթահարելի ուժի ազդեցությունը պետք է ծագի պայմանագիրը կնքելուց հետո**, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակցի կողմից դիրքորոշմամբ չներկայացվեցին բավարար փաստեր ու հանգամանքներ, որոնց առկայության պարագայում հնարավոր կլիներ հաստատված համարել արտակարգ դրություն, ապա կարանտին և ռազմական դրություն հայտարարելու հանգամանքների՝ Մասնակցի ստանձնած պարտավորությունների չկատարման վրա օբյեկտիվորեն ազդելու փաստի մասին: Վերջինիս կողմից չներկայացվեց կոնկրետ որևէ գործողություն, որը

հաղթահարելը, անհաղթահարելի ուժով պայմանավորված, օբյեկտիվորեն եղել է անհնարին՝ կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Մասնակցի աշխատակիցներ՝ Արթուր Գեղամյանի, Դոնարա Մարտիրոսյանի և Գայանե Կարապետյանի կորոնավիրուսով վարակվելու հանգամանքով չի հիմնավորվում, որ վերջիններս հանդիսանում են ընկերության տվյալ գործունեության գործընթացով զբաղվող միակ այն պատասխանատու անձիք, ում բացակայության պայմաններում հնարավոր չէր կատարելու պայմանագրային պարտավորությունները:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Հատկանշական է նաև այն, որ Գայանե Կարապետյանին մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը տրվել է 15.10.2020թ.-ին, Դոնարա Մարտիրոսյանին քաղվածքը տրվել է 24.11.2020թ.-ին և նշվել, որ հիվանդ է եղել 05.09.2020թ.-ից 25.09.2020թ.-ը: Իսկ Արթուր Գեղամյանի անվամբ տրված թիվ 12866 էպիկրիզում դուրս գրման ամսաթիվ է նշվել 20.10.2020թ.-ը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած վերջինիս պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը պայմանավորված չի եղել օբյեկտիվ հանգամանքներով, որոնց առկայության դեպքում հնարավոր կլիներ սույն գործի քննության ընթացքում արձանագրել Մասնակցի մեղքի բացակայությունը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի իմաստով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման հանգամանքների միջև առկա է հակասություն: Առաջին դեպքում Մասնակիցը Բողոքներ քննող անձին ներկայացված 09.02.2020թ.-ի թիվ Պ-009 և 18.02.2021թ.-ին թիվ Մ-019 գրություններով նշում է, որ պայմանագրով նախատեսված պարտավորություններն անհնար է եղել կատարել՝ ելնելով ֆորս-մաժորային իրավիճակից, իսկ երկրորդ դեպքում՝ 25.11.2020թ.-ին թիվ Մ-010 Պատվիրատուին ուղղված գրությամբ նշում է, որ ապրանքները չեն մատակարարվել Պատվիրատուի մեղավորության պատճառով առաջացած տարաձայնության հետևանքով: Նման պարագայում, Բողոքներ

քննող անձը փաստում է, որ «Մանանկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստական հանգամանքները հակասում են իրար, ուստի և արժանահավատ չեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մանանկ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1193-2021 գրությամբ «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/33 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մանանկ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ